ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 օգոստոսի 2014 թվականի N 316-Ա

Հ. ԱԶԱՏՅԱՆԻՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 21-Ի N 129-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասի, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2012 թվականի փետրվարի 2-ի N 32-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 6.2-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Արզականի բժշկական ամբուլատորիա>> պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պաշտոնակատար *Ս. Ջարգարյանի* անձնական դիմումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Արզականի բժշկական ամբուլատորիա>> պետական փակ բաժնետիրական ընկերության ընտանեկան բժիշկ *Հասմիկ Ազարյանին* 2014 թվականի օգոստոսի 1-ից նշանակել ընկերության տնօրենի պաշտոնակատար՝ մինչև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով մրցույթի արդյունքներով (տնօրենի թափուր պաշտոնում) պաշտոնի նշանակումը:

2. ՈՒժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2014 թվականի մարտի 21-ի <<*Ն. Իսրայելյանի մասին*>> N 129-Ա որոշման 2-րդ կետը:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությանը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Արզականի բժշկական ամբուլատորիա>> պետական փակ բաժնետիրական ընկերության հանձնման-ընդունման աշխատանքները և ներկայացնել համապատասխան արձանագրություն:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2014 թվականի օգոստոսի 01
ք. Հրազդան